

# Լրատու

Թիւ 2 (Քացառիկ)  
Դեկտեմբեր 2006

Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակի



## Սիրելի հայրենակիցներ,

Նախ պարտք կը զգամ իմ խորհին շնորհակալութիւններս յայտնելու բոլոր անոնց, որոնք հեռախօսով եւ գրութեամբ իրենց գոհունակութիւնը յայտնեցին, պարբերաբար լոյս տեսնող «Լրատու»ի առաջին թիւի հրատարակութեան առիթով:

«Լրատու»ի 2-րդ թիւով կը փափաքեմ ձեզի տեղեակ պահել այն աշխատանքներուն մասին, որոնք կատարուեցան վերջին ամիսներու ընթացքին ի նպաստ Կիպրահայ համայնքին, ինչպէս նաեւ ինծի դիմող հայ անհատներուն կապակցութեամբ:

Անցնող երեք ամիսները եղան բաւական աշխուժ ու բեղուն, զուգահիւսելով դպրոցներու եւ բարձրագոյն ուսմանց վարժարաններու վերամուտին, գոհացում տալով Զայ աշակերտներու կրթաթոշակի եւ կրթական ծրագիրի պահանջներուն:

Յաճախակի պետական եւ պաշտօնական մակարդակի այցելութիւններով, կարողացայ ապահովել դժուարին հարցերու լուծումը, որոնց մասին անդրադարձած ենք «Լրատու»ի

այս թիւին մէջ:

Պատկան Նախարութիւններուն հետ ունեցած տեսակցութիւններս կեցութեան եւ աշխատանքային հարցերու գծով, Նոր բնոյթ սկսան ստանալ, Հայ անհատներու կարգավիճակները տարբեր պայմաններով քննելու, որպէս ճանչցուած կրօնական փոքրամասնութիւն:

Սեպտեմբեր 18 - 20 Հայաստան Սփիւռք Գ. խորհրդածրոյցովին մասնակցելով, մօտէն հաղորդակից դարձայ բոլոր ծրագիրներուն, որոնք ի գործ պիտի դրուին մեր Մայր Հայրենիքի՝ Հայաստանի բարգաւաճման: Այս ժամանակամիջոցին՝ կարճ հանդիպումներ ունեցայ նաեւ Հայաստանի կարգ մը պետական անձնակազմներուն հետ:

«Լրատու»ի յաջորդ էջերուն մէջ եւ առանձին բաժինով ձեզի պիտի ներկայացնենք՝ ՀՀ Նախագահ Ն. Վ. Տիար Ռուպերթ Քոչարեանի Կիպրոս կատարած պատմական այցելութեան առիթով ամփոփ տեղեկագրութիւն:

Յոյսով եմ, թէ պարբերաբար լոյս տեսնող այս գրքոյկին մէջ պիտի գտնէք շատ մը հարցերու պատասխանը: «Լրատու» ի միջոցով տրուած տեղեկութիւնները պիտի յստակացնեն այն բոլոր սխալ տարածայնութիւնները, որոնք կը խանգարեն այս փոքր գաղութի հեզասահ ազգային կեանքը եւ կը պղտորեն մարդոց մտքերը: Իսկ ես՝ որպէս Կիպրահայ Համայնքի ներկայացուցիչ, անհատական շահերէն վեր դասելով գաղութին ընդհանրական շահերը, պիտի աշխատիմ անկեղծ նուիրումով ու զոհաբերութեամբ:

Եւ վերջապէս, տօնական այս գեղեցիկ օրերու սեմին, սրտանց կը շնորհակարտեմ Ձեր իւրաքանչիւրին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով բոլորիդ քաջառողջ կեանք ու բեղմնաւոր տարի: Իսկ Մեր Մայր Հայրենիքին՝ ծաղկում ու բարգաւաճում:

**Վարդգէս Մահտեսեան**

**Հայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ՀՀ Նախագահի Պատմական այց

Հայաստանի Հանրապետության Նախագահ՝ Ն.Վ. Տիար Ռուպերթ Զոչարեան Կիպրոսի Հանրապետության Նախագահին հրավերով եռօրեայ պետական մակարդակի այցելութիւն մը տուաւ Կիպրոս 22-



Ժամանում Լառնաքայի օդակայանը

25 Նոյեմբեր 2006: Այցելութիւնը պատմական նշանակութիւն ունէր Կիպրահայերուն համար իսկ Հայաստանի եւ Կիպրոսի քաղաքական, տնտեսական եւ զբօսաշրջութեան կապերը առ աւելի ամրապնդուեցան: Որպէս Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ՝ Պրն. Վարդգէս Մահտեսեան, պաշտօնապէս հրաւիրուած էր Կառավարական պատկան մարմիններու կողմէ, ընկերակցելու Նախագահ Զոչարեանին վերոյիշեալ եռօրեայ այցելութեան ընթացքին:



Ժամանում Ս. Աստուածածին եկեղեցի



Ազգային Առաջնորդարանի դահլիճին մեջ

Ազգային Առաջնորդարանը եւ Պետական ներկայացուցիչը յարմար նկատեցին պատուելու Պրն. Զոչարեանը պատշաճ հիւրասիրութեամբ՝ մասանակցութեամբ Կիպրոսի Կառավարութեան արարողակարգի (Protocol) պատշաճութիւնը յարգելով, նամակ մը յղուեցաւ Կիպրոսի Կառավարութեան արարողակարգի բաժանմունքին, որ սիրայօժար ընդունեց Հայ Համայնքի փափաքը, մեզի տրամադրելով Ուր-



Հանդիպում Կիպրոսի Արքեպիսկոպոսին հետ

բաթ 24 Նոյեմբեր 2006ի երեկոյեան ժամերը: Այս հիման վրայ լոյս տեսաւ յայտարարութիւն մը Պետական Ներկայացուցիչին եւ Կաթողիկոսական Փոխանորդին անուևով, որու բովանդակութեան ծանօթ էք բոլորդ:

Սակայն, հակառակ Կիպրոսի արարողակարգի բաժանմունքի համամտութեան, Հայաստանի դեսպանն ու արարողակարգի պաշտօնատարները վերջին պահուն առարկելով այս ծրագրին, ջնջեցին իր մէկ բաժինը՝ Հայաստանի Հանրապետութեան Նախագահին ի պատիւ Ուրբաթ 24 Նոյեմբերին տրուելիք ընթրիքը:

Այս անախորժ կացութիւնը ընդվզում յառաջացուց Կիպրահայ գաղութն ներս եւ դուռ բացաւ անտեղի հակազդեցութեան: Յոյսով ենք որ յետագային փոխադարձ հասկացողութեամբ սմանօրինակ դէպքեր չեն պատահիր:

Պետական մակարդակով ճշդուած մնացեալ այցելութիւնները ընթացան առանց խաչաձեւումներու: ՀՀ Նախագահ՝ Պրն. Ռոպերթ Զոչարեան Ուրբաթ 24 Նոյեմբեր 2006ի առաւօտեան, այցելեց Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցին եւ ծաղկեփունջ գետեղեց Ապրիլեան Յուշակոթողին վրայ: Ապա այցելեց Նարեկ Ազգային Վարժարան եւ Ազգային



Խորհրդարանի Նախագահին հետ հանդիպումէն ետք

Առաջնորդարանի դահլիճին մեջ, մեկ ժամ տեւողութեամբ հանդիպում մը ունեցաւ Թեմական եւ Վարչական ժողովներու անդամներուն ու Կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ:

Պրն. Վարդաթեմա Մահտեսեան խօսք անելով,

յայտնեց թէ «Կիպրահայ գաղութի կարելիութիւնները ի սպաս կը դնենք մեր սիրելի հայրենիքին՝ Հայաստանի ծաղկումին ու վերելքին, շեշտը դնելով անկեղծ ու թափանցիկ փոխադարձ համագործակցութեան վրայ»:

Նախագահական շքախումբը նոյն օրը կեսօրուայ ժամերուն մեկնեցաւ Լառնաքա, ուր Նախագահ Քոչարեան հիմնաքարը դրաւ քաղաքի ծովեզերքը կառուցուելիք Կիլիկիայէն ժամանող գաղթականներուն սուրբուած յուշարձանին, Կաթողիկոսական Փոխանորդ Տ.Վարուժան Արքեպիսկոպոսի կատարած հիմնօրհնեքէն ետք:

Պրն. Մահտեսեան Յունարէն լեզուով խօսք անելով ընդգծեց թէ կառուցուելիք յուշարձանը արտայայտութիւնն է Կիպրոսի ժողովուրդին հանդէպ գաղթականներուն ժառանգորդ սերունդներու ունեցած երախտագիտութեան, ինչպէս նաեւ մնայուն յուշարար մը՝ անպատիժ մնացած Հայկական Յեղասպանութեան: Դրուատեց նաեւ նախկին Պետական Ներկայացուցիչ՝ լուսահոգի Պետրոս Գալայճեանի նախածնունդները, յուշարձանի գաղափարի իրականացման մէջ:



**Խօսք՝ Լառնաքայի Յուշարձանի հիմնարկէքի հանդիսութեան ընթացքին**

## Գործունեություն

Մեր ազնիւ ընթերցողներուն կը փափաքինք տեղեկացնել, թէ գրասենակիս կողմէ կատարուած բոլոր աշխատանքները քաղաքացիական հարցերու գծով կամ այլ, կը կատարուին ձրիաբար, առանց նիւթական որեւէ վարցատրութեան:

Նաեւ, պարտք կը զգանք մեր բոլոր հայրենակիցներուն յիշեցնելու, թէ Կիպրոս բնակեցման արտօնագրերը (Residence / Work permit) պէտք է նորոգեն ի զօրու թուականէն նուազագոյնը 15 օր առաջ:

Ստորեւ պիտի գտնէք կատարուած զանազան աշխատանքներու մանրամասնութիւններ, որոնք կատարուեցան Սեպտեմբեր, Յոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին:

### Աշխատանքային

Եթա՞ անձեր գործ ստանձնեցին տարբեր հաստատութիւններու մէջ, ինչպէս նաեւ միջամտութիւններ եղան աշխատավարձեր բարելաւելու տրամադրութեամբ:

### Քաղաքացիական հարցեր եւ կեցութիւն

Պրն. Վարդգէս Մահտեսեանի միջնորդութեամբ եւ Քաղաքացիական հարցերու պատասխանատուի ամէնօրեայ պետական գրասենեակներ այցելութեամբ, կրցանք ապահովել ու երկարածգել Կիպրոս կեցութեան արտօնագրեր, հիւանդանոցային գրքոյկներ եւ այլ հարցերու դասաւորումներ: Նաեւ, բոլոր պայմանները ամբողջացնող հայրենակիցներուն օժանդակեցինք հպատակութեան դիմում ներկայացնելու գործընթացին մէջ:

Հոկտեմբերի մէջ, ընտանիքի տեր հայ երիտասարդ մը ութ (8) օր բանտարկութիւն եւ երկրէն արտաքսում ստացաւ, կեցութեան արտօնագիրը Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքէն չնորոգուելուն պատճառով: Պրն. Մահտեսեան անմիջապէս միջամտելով Ներքին Գործոց Նախա-

րարութեան եւ Աշխատանքային Նախարարութեան մօտ, կարողացաւ վերոյիշեալ երիտասարդին ապահովել 1 տարուայ կեցութեան արտօնագիր եւ աշխատանքի իրաւունք:

Չորեքշաբթի 22 Նոյեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան հպատակութեան դիմում կատարող անհատի մը հանդէպ եղած անհիմն ամբաստանութիւնները վերացուց, անձամբ ներկայանալով Ներգաղթի Բաժանմունքի Տնօրէնութեան:

Իսկ Շաբաթ 25 Նոյեմբերին, հեռաձայնային կապ հաստատելով կարգ մը Նախարարներու հետ, Պրն. Մահտեսեան Լառնաքայի օդակայանէն մուտք գործելու իրաւունք ապահովեց Իրաքահայ երիտասարդի մը, որպէս Քաղաքական Ապաստանեալ:

Այս բաժնին մէջ, ցաւ ի սրտի յարմար կը նկատենք նշելու, թէ Հայաստանի Հանրապետութեան հպատակ հարեՆակիցներու անձագրի թուականի երկարածգման կամ վաւերական կնիքի հաստատման հարցերու դասաւորումը կը կատարենք երեսփոխանական գրասենեակի միջոցաւ, Յունաստան հաստատուած Հայաստանի Հանրապետութեան Դեսպանատան անտարբերութեան պատճառով: Այս գծով կ'ուզենք ձեր բուրի տեղեկացնել, թէ մեր գրասենեակը կը կատարէ նաեւ այս աշխատանքը դիւրացնելու համար մեր հայրենակիցներու կեանքը:

### Կրթանպաստ

Սեպտեմբեր ամսուայ սկիզբը, Պետական Ներկայացուցիչը անձանք տեսակցելով բարձր կրթութեանց հաստատութիւններու կրթաթոշակի պատասխանատուներուն եւ տնօրէնութեանց հետ, կրցաւ ապահովել վեց հայ աշակերտներու (5 Կիպրահայ եւ 1 Պուլկարահայ) կրթաթոշակ Intercollege, Americanos College եւ Frederick Polytechnic հաստատութիւններն ենրս:

«Լրատու»ի առաջին թիւով արդէն իսկ յայտարարած էինք թէ կրթանպաստ ապահովուեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան Կիպրահայ նախկին աշակերտներուն,

որոնք իրենց ուսումը կը շարունակեն օտար վարժարաններու մէջ: Այս թիւով յարմար կը նկատենք փոխանցելու, թէ 17 Յոկտեմբեր 2006 թուակիր նամակով մը Կրթական Նախարարութիւնը Պետական Ներկայացուցիչին տեղեակ պահեց վաւերացուած **լրիւ** կրթանպաստի դրութեան մասին մինչեւ 2009 թուականը: Նոյն նամակին մէջ կը յիշուէր նաեւ, թէ այս կրթանպաստին **դրական** պատասխանին պատճառը՝ Պրն.Վարդգէս Մահտեսեանի նիւթին վերարծարծումն ու Տնտեսական Նախարարութեան մօտ իր տարած աշխատանքներուն արդիւնքն էր:

Նաեւ ունեցանք մի քանի պարագաներ, որոնց մեր օժանդակութիւնը տրամադրեցինք միջամտելով կրթական պատկան մարմիններու մօտ դպրոցական այլ հարցերու կապակցութեամբ, օրինակի համար դպրոցի փոփոխութիւն կամ կրթաթոշակի հետ կապուած այլ հարցեր:

### **Անգլիական Վարժարան - Նիկոսիա**

Ի մտի ունենալով հայ աշակերտներուն Յունարէն լեզուի կարելորութիւնը ապագայի իմաստով եւ ընդառաջելով ծնողներու փափաքին, Պրն.Վարդգէս Մահտեսեանի միջամտութեամբ բոլոր հայ աշակերտները, որոնք այս տարեշրջանին Անգլիական Վարժարանի մուտքի քննութեանց Յունարէն լեզուի մակարդակի ճշդման համար անբաւարար միջին ապահոված էին, փոխանակ հետեւելու Յունարէնի յատուկ դասերուն (Floaters), սկսան մասնակցիլ Յունարէն լեզուի կանոնաւոր դասընթացներուն:

### **Շնորհաւորական գիրեր**

Օրին, Պետական Ներկայացուցիչը պատշաճ շնորհաւորական գիրով մը իր երախտագիտութիւնը յայտնեց Տէր եւ Տիկին Տիգրան եւ Սեդա Ուզունեաններուն, իրենց կատարած ազգանուէր բարեսիրութեան համար եւ անոնց մաղթեց արեւշատութիւն եւ երկար կեանք:

Հայաստանի աղէտեալ գօտիի՝ Սպիտակի մէջ, Ուզունեան

գոյգի ներդրումով կառուցուած բնակարանները տրամադրուեցան որոշ ընտանիքներու, որոնք իրենց տուները կորսնցուցած էին 1988-ի Դեկտեմբեր 7ի ահաւոր երկրաշարժին:

Շաբաթ 9 Սեպտեմբեր 2006ին, Յայ Պետական Ներկայացուցիչը նամակով մը շնորհաւորեց եւ յաջողութիւն մաղթեց Պրն. Նեոքլիս Սիլիքիոտիսին, Ներքին Գործոց Նախարարութեան պաշտօնին նշանակուելուն համար եւ այս առիթով ան իր պատրաստակամութիւնը յայտնեց գործակցելու Յայ Յամայնքի հարցերուն գծով:

Երկուշաբթի 9 Յոկտեմբեր 2006ին շնորհաւորական նամակ մը յղուեցաւ Պաշտպանութեան Նախարարի պաշտօնին նշանակուած՝ Պրն. Նիկոս Սիմեոնիտիսին մաղթելով անոր յաջողութիւն իր դժուարին առաքելութեան մէջ:

Երեքշաբթի 17 Յոկտեմբեր 2006ին, Պետական ներկայացուցիչը նամակով մը շնորհաւորեց Ֆրանսայի Խորհարդարանը՝ Յայկական Տեղասպանութեան Ժխտման քրեակա-նացման նախագիծի որդեգրումին պատմական առիթով ինչպէս նաեւ յատուկ գիրով մը իր երախտագիտութիւնը յայտնեց՝ Ժողովրդավար Շարժումի անդամ՝ Յայազգի Պրն. Փաթրիք Տէվեճեանին իր տարած հայանպաստ աշխատանքին համար: Նոյն նպատակով, երեսփոխանական գրասենեակի Մամլոյ Բաժանմունքի Ներկայացուցիչին կողմէ, հաղորդակցութիւն մը լոյս տեսաւ յունարէն լեզուով, որ յանձնուեցաւ Կիպրոսի լրատուական գործակալութեան: Յոս տեղին է յիշել թէ վերոյիշեալ անկիւնադարձային նիւթին գծով, Շաբաթ 14 Յոկտեմբեր 2006ին Պրն. Մահտեսեան հրաւիրուեցաւ հարցազրոյց մը ունենալու Կիպրոսի Ռատիոկայանին 3-րդ ալիքէն:

Երկուշաբթի 23 Յոկտեմբեր 2006ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան նամակով մը թէ՛ Կիպրահայ գաղութի անունով եւ թէ անձնապէս շնորհաւորեց Յայազգի Պրն. Մարիոս Կարոյեանը, իր նոր պաշտօնին առիթով եւ մաղթեց անոր նորանոր նուաճումներ Կիպրական Զաղաքական կեանքէն ներս:

Ուրբաթ 10 Նոյեմբեր 2006ին, Պետական Ներկայացուցի-



Մարիոս Կարոյեանի հետ

չը յատուկ գիրով մը իր եւ Հայ գաղութի անունով շնորհաւորեց Խրիստոսթոմոս Բ. Արք.ը, Կիպրոսի Յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ պետ ընտրուելուն առիթով եւ մաղթեց, որ այս ընտրութիւնը առաւել եւս սերտացնէ Հայ եւ Յոյն եկեղեցիներու եղբայրական կապերը, սատարէ Կիպրական հարցի բարուը լուծման եւ Կիպրոսի գրաւեալ բաժնի Հայկական կրօնական ժառանգութեանց պահպանման:

Հինգշաբթի 30 Նոյեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան իր եւ Կիպրահայ գաղութի անունով շնորհաւորեց Արժանթինի Խորհրդարանը, Հայկական Ցեղասպանութեան ընդունման օրէնքին գծով, նշելով թէ այս քայլը կը քաջալերէ այլ քաղաքակրթուած երկիրներ նոյն միջոցին դիմելու:

### **Պետական մակարդակի հանդիպումներ**

Երեքշաբթի 5 Սեպտեմբեր 2006ին հանդիպում՝ Ընդհանուր Դատախազ՝ Պրն. Պետրոս Զլիրիտիսի հետ: Այս հանդիպումին գլխաւոր նիւթն էր՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման հարցին իրաւական կացութիւնը:

Հինգշաբթի 5 Հոկտեմբեր 2006ին հանդիպում՝ Կրթական

Նախարար՝ Պրն. Պեֆկիոս Երկրիատիսին հետ, Մելգոնեան Կրթական Հաստատության Կիպրահայ աշակերտներու կրթանպաստին գծով:

Երեքշաբթի 24 Հոկտեմբեր 2006ին հանդիպում՝ Մարդկային Իրաւունքներու Յանձնախումբի ներկայացուցիչներուն հետ ուր արծարծուեցան փոքրամասնութիւններու իրաւունքներու հարցերը:

Երկուշաբթի 30 Հոկտեմբեր 2006ին հանդիպում՝ Ներքին



**Ներքին Գործոց Նախարարին հետ**

Գործոց Նախարար՝ Պրն. Նեղլիս Սիլիքի-նոտիսի հետ: Այս հանդիպման ընթացքին Պրն. Մահտեսեան Նախարարին ներկայացուց Կիպրոս բնակչութիւն հաստատած Հայ անհատներու եւ ընտանիքներու կեցութեան ամփոփ թղթածրար մը, ներառեալ քաղաքացիութեան դիմում կատարողներու անուանացանկը: Ան Պրն. Նախարարէն

խնդրեց, որ ծագումով Հայ անհատներու եւ ընտանիքներու կեցութեան հարցերը քննուին տարբեր չափանիշերով:

Երկուշաբթի 30 Հոկտեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան բարեկամական սերտ հանդիպում մը ունեցաւ Մարիոս Կարոյեանին հետ: Երկու հայազգի պետական անձնաւորութիւններու խօսակցութեան առանցքը կազմեց՝ Կիպրահայ գաղութի իրավիճակը եւ փոխադարձ գործակցութեան խոստումներ փոխանակուեցան:

Երկուշաբթի 13 Նոյեմբեր 2006ին, Պետական Ներկայա-



ցուցիչը տեսակցեցաւ Աշխատանքային եւ Ընկերային Ապահովութեան Տախարար Տոքթ. Անտոնիս Վասիլիուին հետ, ներկայութեամբ տախարարութեան բաժանմունքներու պատասխանատուներու: Անգամ մը եւս Պրն. Մահտեսեան շեշտը դրաւ հայերու դիմումները տարբեր պայմաններով քննելու տրամադրութեան: Այս հանդիպման մասին անդրադարձած էր տեղական «Սիմերիսի» օրաթերթը իր Երեքշաբթի 14 Նոյեմբեր 2006 թիւով (Էջ 14):

Երեքշաբթի 13 Նոյեմբեր 2006ին տեսակցութիւն՝ Ոստիկանապետ՝ Պրն. Խարալամպոս Զուլէնտիսի հետ ծանօթանալու եւ հետապնդելու մեզի հասած կարգ մը հարցերու մանրամասնութիւնները եւ իրավիճակը:

Հինգշաբթի 30 Նոյեմբեր 2006ին Պրն. Մահտեսեան դարձեալ հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Տախարար՝ Պրն. Նեոքիս Սիլիքիոտիսին հետ: Այս հանդիպումին ներկայ էին նաեւ Մարոնիթ եւ Լատին համայնքներու ներկայացուցիչները:

Հինգշաբթի 30 Նոյեմբեր 2006ին Պետական Ներկայացուցիչը տեսակցեցաւ Օրէնքներու Յանձնակատար՝ Տիկ. Լիտա Բուրսումպայի հետ, քննարկելու եւ նոր առաջարկներ ներկայացնելու Եւրոպայի Տախարարաց Խորհուրդին, Շրջանա-

յին կամ Փոքրամասնական Լեզուներու Եւրոպական Հիմնաթուղթի (European Charter for Regional or Minority Languages) տեղեկագրին գծով:

### **Կիպրահայ թերթերու օժանդակութիւն**

Չորեքշաբթի 13 Սեպտեմբեր 2006ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպումի մը հրաւիրեց «Ազատ Ձայն»ի եւ «Արձագանգ»ի արտօնատերերն ու խմբագրապետերը ու անոնց տեղեկացուց, թէ Յունուար 2006Էն սկսեալ օժանդակութիւն պիտի ստանան այն թերթերը, որոնք 2006 թուականի առաջին վեցամսեակին լոյս տեսան եւ իրենց տեղեկատուական բնոյթով կը սատարեն հայ լեզուի, պատմութեան ու մշակոյթի պահպանման ու տարածման: Օժանդակութեան գումարը կախեալ է թերթերու հրատարակած թիւերէն:

### **Կիպրոսի գրաւեալ գօտիի կրօնական եւ եկեղեցական կալուածներու արխիւներու փոխանցում**

Արտաքին գործոց նախարարութեան Կիպրական եւ Եւրոթրքական հարցերու բաժանմունքի տնօրէնութեան գրասենեակէն ստացուած նամակով մը Պրն. Մահտեսեանին տեղեկացուցին, թէ կը փափաքին մանրամասնութիւններ ստանալ Հայ համայնքի Կիպրոսի գրաւեալ շրջանին մէջ մնացած պատմամշակութային եւ կրօնական կոթողներուն ու իրենց ներկայ իրավիճակին մասին:

Սեպտեմբեր 2006 թուակիր տեղեկագիրով մը, Պետական Ներկայացուցիչը համադրելով Ազգային Առաջնորդարանի եւ Հայ Աւետարանական Համայնքի տեղեկութիւնները, թղթածրար մը յանձնեց վերոյիշեալ պատկան մարմինին, որպէսզի Հայ գաղութի ժառանգութիւններն ալ Կառավարութեան արխիւներուն մէջ տեղ գտնեն:

Թղթածրարը կը պարփակէր վերջերս առնուած նկարներ եւ Ազգային Առաջնորդարանին կողմէ հրատարակուած գուճագարդ ալպով:

### **Հայկական հին գերզմանատան վերանորոգում**

Հայկական հին գերզմանատան վերանորոգման գծով տարուած աշխատանքներու ծիրէն ներս, Պրն. Վարդգէս Մահտեսեան հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար Պրն. Նեոքլիս Սիլիքիոտիսին հետ եւ անոր յանձնեց թղթածրար մը, որ կ'ընդգրկէ բացատրողական սամակ Ներկայցուցիչին կողմէ եւ 4arc+ ճարտարապետական ընկերութեան նախահաշիւը: Նամակին մէջ կը նշուի, թէ Հայ գաղութը եւ եկեղեցին ի վիճակի չեն այս մեծածախս գումարը հայթաթելու եւ կը խնդրուի Կիպրոսի բարեխնամ կառավարութեան օժանդակութիւնը:

### **Տեսակցութիւն Prof. Heinz A. Richterի հետ**

Երկուշաբթի 23 Զոկտեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան տեսակցութիւն մը ունեցաւ Mannheim համալսարանի դասախօս Prof. Heinz A. Richter-ի հետ: Prof. Richter հանրածանօթ է Յունաստանի եւ Կիպրոսի պատմութեան գիրքերու որպէս հեղինակ: Տեսակցութեան նպատակն էր տեղեկութիւններ ու մանրամասնութիւններ ունենալ Կիպրահայ գաղութի ծագումին եւ պատմութեան մասին, հրատարակութեան տակ գտնուող «Փոքրամասնութիւններ Կիպրոսի մէջ» գիրքին համար:

### **Տեսակցութիւն UNDP-ACTի պատասխանատուին հետ**

Երկուշաբթի 20 Նոյեմբեր 2006ին, Պետական Ներկայացուցիչը երկրորդ տեսակցութիւն մը ունեցաւ UNDP-ACTի այժմու պատասխանատու՝ Պրն. Javier Barrantes-ի եւ այլ պաշտօնակատարներու հետ, ներկայութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի, Վարչական Ժողովի ներկայացուցիչ Պրն. Սեպուհ Դաւիթեանի եւ ճարտարապետ Պրն. Ճոն Կեվիերեանի: Հանդիպումին զեկուցուեցաւ կիպրահայ կողմին, թէ 2007ի սկիզբը UNDP-ACTը պիտի հրապարակէ միջազգային մրցոյթ (tenders), ճարտարապետական ընկերութիւններէ ապահովելու համար վերանորոգ-

ման առաջարկագիներ Վիքթորիա փողոցի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ, Առաջնորդարանի շէնքի եւ Մելիքեան-Ուզունեան Վարժարանի վերանորոգութեան համար: Ըստ UNDP-ACT-ի ծրագրաւորումներուն, մինչեւ 2008ի Սեպտեմբերը, հայկական այս կոթողները դարձեալ պիտի հասնին իրենց նախնական վիճակին:

### **Ձեռնարկներու ներկայութիւն**

Շաբաթ 30 Սեպտեմբեր 2006ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ գտնուեցան Ս.Դ.Յ. կուսակցութեան կազմակերպած՝ Արամ եւ Պետրոս Գալայճեաններու յիշատակի հանդիսութեան, «Փասիտի» սրահին մէջ:

Շաբաթ 28 Յոկտեմբեր 2006ին, Տեր եւ Տիկին Վարդգես Մահտեսեան ներկայ եղան Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադրութեան 160ամեակին եւ Նիկոսիոյ բռնագրաւուած Հայ Աւետարանական Եկեղեցւոյ 60ամեակին նուիրուած պաշտամունք-հանդիսութեան: Պրն. Մահտեսեան խօսք առնելով իր պատրաստակամութիւնը յայտնեց նեցուկ կանգնելու Հայ Աւետարանական համայնքի աշխատանքներուն:



**Հայ Աւետ. Եկեղեցւոյ Պաշտամունք-Հանդիսութիւն**

### Հարցազրոյցներ

Շաբաթ 21 Յոկտեմբեր 2006ին, Պետական Ներկայացուցիչը հարցազրոյց մը ունեցաւ Աթենքի «Արմենիկա» պարբերաթերթի (յունարէն լեզուով լոյս տեսնող) խմբագիրներէն Պրն. Սարօ Տէտէյեանի հետ, Կիպրահայութեան ներկայ իրավիճակին ու հարցերուն շուրջ:

Երկուշաբթի 30 Յոկտեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան հարցազրոյց մը ունեցաւ «Ազատ Ձայն»ի վարչական խորհուրդի եւ խմբագրական կազմի անդամ Պրն.Գեորգ Չէթունցեանի հետ: Հարցազրոյցը լոյս տեսաւ «Ազատ Ձայն»ի Սեպտեմբեր-Յոկտեմբեր 2006 թիւի չորրորդ եւ հինգերորդ էջերուն մէջ:

Շաբաթ 4 Նոյեմբեր 2006ին, Պրն. Մահտեսեան հարցազրոյց մը ունեցաւ Լիբանանի մէջ լոյս տեսնող «Ծաղիկ» պարբերաթերթի խմբագրապետ՝ Պրն. Յակոբ Տիւնիայեանի (Ասպետ Ռուբինեան) հետ:

### Հայաստան - Սփիւռք Գ. Խորհրդաժողով

Հայաստանի Հանրապետութեան Արտաքին Գործոց Նախարար՝ Պրն.Վարդան Օսկանեան 22 Օգոստոս 2006 թուակիր նամակով մը (ստացուած Յունաստանի մէջ Հայաստանի դեսպանատան միջոցով) հրաւիրեց Պրն.Վարդգէս Մահտեսեանը մասնակցելու Հայաստան-Սփիւռք Գ. Խորհրդաժողովին: Չորսօրեայ ճամբորդութեամբ մը, Պետական Ներկայացուցիչը Սեպտեմբեր 18-22 այցելեց Հայաստան մասնակցելու վերոյիշեալ խորհրդաժողովին: Այս առիթով ան ծանօթացաւ եւ տեսակցութիւններ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան պետական անձնաւորութիւններուն հետ:

Յիշենք, որ այս խորհրդաժողովին, Հայաստանի Հանրապետութեան Նախագահին կողմէ յատուկ հրաւերով կը մասնակցէր նաեւ Կիպրահայ՝ Դոկտ. Սօսի Գասպարեան, որ շատ յաջող ելոյթ մը ունեցաւ ներկայացնելով իր ուսումնասիրութիւնները Հայաստան ներգաղթողներու գծով եւ արժանացաւ Պրն. Մահտեսեանի յատուկ շնորհաւորութեան:

Սեպտեմբեր 21ին, Պրն.Ներկայացուցիչը ներկայ գտնուելով Հայաստանի Հանրապետության 15ամեակի զօրահանդեսին, մեծ խանդավառությամբ ու լաւ տապաւորութիւններով վերադարձաւ Կիպրոս:

### **«Ս-19» Հայաստանի Հանրապետության Ազգային Ֆութպոլի Խումբ**

Երեքշաբթի 24 Հոկտեմբեր 2006ին, Պետական Ներկայացուցիչը իր տան մէջ հիրընկալեց «Փիւնիկ»ի Նախագահ՝ Պրն. Կարէն Յարութիւնեանն ու Հայաստանի Հանրապետության 19 տարիքէ վար («Ս-19») Ֆութպոլի Ազգային խումբի բժիշկ՝ Պրն.Վահագն Օրտեանը:

Խումբը Կիպրոս կը գտնուէր Եւրոպական մրցաշարքերու գտումի խաղերու մասնակցելու նպատակով:

Պրն.Վարդգէս Մահտեսեան գաղութիս ակումբներուն տեղեկացուց՝ մեծաթիւ ներկայութեամբ քաջալերելու մեր հայրենի մարզիկները:

### **Յապաղած Շնորհաւորագիր**

Հայաստանի Հանրապետության Յունաստանի եւ Կիպրոսի մօտ դեսպան՝ Պրն. Վահրամ Կաժոյեան, Ուրբաթ 17 Նոյեմբեր 2006ին, Ազգային Առաջնորդարանին մէջ հանդիպումի մը ընթացքին, Պրն. Մահտեսեանին յանձնեց 25 Մայիս 2006 թուակիր շնորհաւորական գիր մը, որու մէջ ան Պրն. Մահտեսեանի կը մաղթէ արգասաբեր գործունէութիւն՝ ի նպաստ Կիպրահայ համայնքի, Հայաստանի եւ Հայ-Կիպրական յարաբերութիւններու խորացման:

### **Նշանակումներ**

Պրն. Վարդգէս Մահտեսեան Ընտանեկան Դատարանի (Οικογενειακο Δικαστήριο) ներկայացուցիչ նշանակեց Տիկիններ՝ Ռուպինա Սամոնեան եւ Լուիզ Տեր Բարթոլ:

### Յանձնախումբեր

«Լրատու»ի Նախկին թիւով փոխանցած էինք, թէ ձեզ տեղեակ պիտի պահենք յանձնախումբերու կազմութեան գծով: Ուրախ ենք յայտնելու, թէ կազմուեցան հետեւեալ յանձնախումբերը.-

1. Խորհրդատու Մարմին (Advisory Committee)
2. Կիպրոս - Հայաստան Յանձնախումբ (Cyprus - Armenia Committee)
3. Եւրոպական Միութիւն / Եւրոպական Խորհուրդ Յանձնախումբ (EU / European Council Committee)
4. Մշակութային եւ Ընկերային Ծառայութեանց Յանձնախումբ (Cultural & Welfare Committee)
5. Երիտասարդական Յանձնախումբ (Youth Committee)

Կիրակի 10 Դեկտեմբեր 2006ի երեկոյեան ժամերուն, վերոյիշեալ յանձնախումբերը ծանօթացման հանդիպում մը ունեցան Պրն. Մահտեսեանին հետ, Երեսփոխանական գրասենեակին մէջ:

## Մեր հայրենակիցներու ուշադրութեան

.. Կամքէ անկախ պատճառներով մեր գործունէութիւնը ամբողջութեամբ չենք կրնար փոխանցել ձեզի որպէսզի «Լրատու»ն պահենք ամփոփ եւ տեղեկատուական բնոյթի ծիրէն ներս: Տարուած են նաեւ զանազան աշխատանքներ, որոնց արդիւնքը տակաւին շօշափելի չէ, առ այդ՝ ի վիճակի չենք գրաւոր ձեւով յայտարարելու:

.. Նկատի ունենալով, թէ «Լրատու»ի բացառիկ այս թիւը մեծ մասամբ նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ. Պրն. Ռոպէրթ Քոչարեանի պաշտօնական այցելութեան, «Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինը պիտի շարունակենք «Լրատու»ի յաջորդ թիւով:

**Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ  
Կը Շնորհաւորեն Մեր Հայրենակիցները  
Ամանորի եւ Ս. Ծնունդի  
Չոյզ Տօներուն Առիթով**

***Մաղթելով*  
Առողջութիւն եւ Արեւշատութիւն**

***Մեր Գաղութիւն*  
Բարգաւաճում**

***Եւ Մեր Չոյզ Հայրենիքներուն*  
*Հայաստանին եւ Կիպրոսին*  
*Հզօրացում եւ Ազգային*  
*Հիմնախնդիրներուն Բարուք Լուծում***

**ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**Քաղաքական Գրասենեակ**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42

Ել. Յացէ office@armenianmp.com

Ոստայնաէջ՝ <http://www.armenianmp.com>

**Խորհրդարանական Գրասենեակ**

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42

Ել. Յացէ vmahdessian@parliament.cy